ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«24» «հուլիս» 2019թ. № 232-Ա

ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ԲԱՑ ԹՈՂՆՎՈՂ ՋՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով վարչապետի 2019 թվականի հուլիսի 17-ի N952-Ա որոշման 2-րդ կետով և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել Սևանա լճից բաց թողնվող ջրի արդյունավետ օգտագործման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«24» հուլիս 2019թ.
ք. Երևան

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
2019 թ. հուլիսի 24
N 232-Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում է վարչապետի 2019 թվականի հուլիսի 17-ի N952-Ա որոշմամբ, Սևանա լճից բաց թողնվող ջրի առավել արդյունավետ օգտագործման, հոսակորուստների և ապօրինի ջրառի հնարավոր բացառման նպատակով, ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) աշխատանքների կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի և դաշտային այցելությունների միջոցով:

4. Նիստերը գումարվում են ամիսը երկու անգամ կամ ըստ անհրաժեշտության:

5. Դաշտային այցելությունները կատարվում են 2019 թվականին ոռոգման նպատակով Սևանա լճից ջրի բացթողնման ընթացքում, Սևան-Հրազդանյան ոռոգման համակարգում (այսուհետ՝ Համակարգ) ապօրինի ջրառի բացահայտման, ջրանցքների բաժանարար կետերում ներկայացված հայտի և փաստացի ջրառի համադրման, մեխանիկական ջրառի, մասնավորապես, Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանների դրվածքային հզորությամբ աշխատանքների ապահովման, այլընտրանքային ջրառի ապահովման հնարավորության դեպքում՝ Սևանա լճից ջրառի բացառման աշխատանքների իրականացման նպատակով: Համակարգը սպասարկում է ք. Երևանի, Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերը: Աշխատանքային խումբը, ամենօրյա ռեժիմով, փաստացի վիճակի ուսումնասիրություններ է կատարում Համակարգի մայր, միջտնտեսային ջրանցքներում

և հիմնական ջրաղբյուրներ հանդիսացող Հրազդան գետում, Մարմարիկի, Ապարանի և Ազատի ջրամբարներում, Մխչյանի և Ռանչպարի պոմպակայաններում, Կոտայքի մայր ջրանցքում, Նաիրի դոտացիոն ջրանցքում, Քասախի ոռոգման համակարգում, Արզնի-Շամիրամ ջրանցքի 1-ին և 2-րդ հերթերում, Ստորին Հրազդանի ջրանցքի 1-ին և 2-րդ հերթերում, Էջմիածնի և Արտաշատի ջրանցքներում:

6. Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության և ջրային կոմիտեի ներկայացուցիչները՝ իրականացնում են Համակարգի միջոցով Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի և ք. Երևանի հողատարածքները ոռոգելու նպատակով ջրի բացթողնման, չափաքանակների, ռեժիմի և ջրի արդյունավետ, նպատակային օգտագործման ուղղությամբ զննության ամենօրյա աշխատանքներ:

7. Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ներկայացուցիչը՝ ամեն օր աշխատանքային խմբի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ:

8. «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչը՝ ըստ անհրաժեշտության շրջակա միջավայրի նախարարություն է ներկայացնում տեղեկատվություն՝ եղանակային կանխատեսումների և հիդրոլոգիական դիտարկումների մասին:

9. Ջրային կոմիտեի ներկայացուցիչները.

1) 10-օրյա պարբերականությամբ շրջակա միջավայրի նախարարություն են ներկայացնում տվյալներ, Համակարգին առնչվող ջրօգտագործողների ընկերությունների կողմից սպասարկվող հողատարածքներում, ջրամատակարարման քանակի 10-օրյակային հաշվետվությունների վերաբերյալ,
2) ապահովում են Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանների աշխատանքները՝ դրվածքային հզորություններին համապատասխան,
3) շրջակա միջավայրի նախարարության և «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչների հետ համատեղ ապահովում են ջրառի կետերում ջրաչափության և չափաբերման աշխատանքների իրականացումը, ըստ անհրաժեշտության:

10. Աշխատանքային խմբի անդամները, ըստ անհրաժեշտության, իրականացնում են համակարգի մայր ջրանցքների և դրանցից սնվող միջտնտեսային ոռոգման ջրանցքների գլխամասերում ջրառների հաշվառում: Խախտումների կամ ջրառի պահանջարկի և փաստացի ջրառի անհամապատասխանության դեպքում կազմում են արձանագրություն, հնարավորության դեպքում բացառել անհամապատասխանությունը և զեկուցել:

11. Շրջակա միջավայրի նախարարության, Ջրային կոմիտեի, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ու «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչները՝ իրականացնում են աշխատանքներ փաստացի ջրակորուստների գնահատման և ապօրինի ջրառի բացահայտման նպատակով՝ ներկայացնելով հաշվետվություն, ըստ անհրաժեշտության:

12. Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ներկայացուցիչը՝ խախտումների կամ անհամապատասխանությունների բացահայտման դեպքում սահմանված կարգով ներկայացնում է արձանագրություն, դրան հետագա ընթացք տալու համար: